

- 51 Իսկ նուիրակ Սիմոն աւբբին ,
Որ տուեալ էր փոխ Սարգսին
Զոսկիս հարիւր յօր աքսորին ,
Զօնէր նըմա զայն գրլխովին :
- 52 Զորմէ Սարգիս մեր փոխառու
Թէպէտ էր միշտ շնորհակալու ,
Այլ հարկեալ իսկ օժտիւս սյսու
Սիրէր բզնա զերթ ձօնարկու :
- 53 Արդ Յակոբու բոց նախանձուն ,
Որով կիզելւր Սարգիս բաբուն ,
Շիջեալ իսպառ ի սիրա իւր բուն՝
Աւթէր Սարգսի անդորրութիւն :
- 54 Ուստի ոչ եւս ատողաբար ,
Այլ մանաւանդ սիրելաբար
Թոյլ տար Սարգսի կալ , կեալ դադար ,
Ուր եւ նոյնն իսկ ինքնին ցանկայր :
- 55 Զոր եւ թողոյր ազատապէս
Յեկեղեցիս ի կիւրակէս ,
Նաեւ յայլ տօնս մեծահանդէս ,
Քարոզ կարգալ յաւէտ իւր պէս :
- 56 Այսուիկ Սարգիս անքոյթանայր ,
Զանցեալ չարիս ողջ մոռանայր ,
Առ Պատրիարքն յաճախ երթայր
Սիրով նորին զուարճանայր :
- 57 Նաեւ Գրբունք ապարանից
Ազքանազեան Ամիրայից
Բաց կային միշտ ելուժրտից
Սարգսի մերոյ վստահալից :